ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը ազգանունը, զբաղեցրած պաշտոնը** ՝ Վահե Գրիգորյան, ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի տեղակալ
2. **Գործուղման վայրը/ ժամկետը՝** Վիեննա, Ավստրիա, 2024թ. նոյեմբերի 25-28
3. **Հրավիրող կողմը՝** Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)
4. **Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Միջուկային գիտության, տեխնոլոգիաների, կիրառությունների և տեխնիկական համագործակցության ծրագրի նախարարական համաժողովի աշխատանքներին
5. **Քննարկված թեմաները՝** Միջուկային գիտության, տեխնոլոգիաների, կիրառությունների և տեխնիկական համագործակցության ծրագրի նախարարական համաժողով (Ministerial Conference on Nuclear Science, Technology and Applications and the Technical Cooperation Programme):
6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝**
   Համաժողովի ընթացքում քննարկվեցին ատոմային էներգիայի ոչ էներգետիկ կիրառության ոլորտներում ընթացող ծրագրերը և աշխատանքները, ներկայացվեց ԱԷՄԳ ընթացիկ ծրագրերը: Առանձին ուշադրություն դարձվեց Հույսի ուղի (Rays of Hope) ծրագրին:
   - Հանդիպում ԱԷՄԳ գլխավոր տնօրեն Ռաֆայել Մարիանո Գրոսսիի հետ:
     Հանդիպման ընթացքում ներկայացվեց Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ նոր մասնաշենքի կառուցման ընթացքը, ինչպես նաև բարձր գնահատվեց ԱԷՄԳ աջակցությունը կենտրոնի հզորությունների, ծառայությունների ծավալների և որակի բարձրացմանը:
     Քննարկվեց ԱԷՄԳ առաջիկա աջակցության ծրագրերը և հնարավորությունները:
     ԱԷՄԳ գլխավոր տնօրեն Ռաֆայել Մարիանո Գրոսսիին 2025 թվականին հրավիրվեց Հայաստան, որն ուրախությամբ ընդունվեց:

   - Հանդիպում ԱԷՄԳ տեխնիկական համագործակցության դիվիզիոնի ղեկավարի հետ:
     Անդրադարձ կատարվեց ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության շրջանակում իրականացվող ընթացիկ ծրագրերին, ինչպես նաև նախատեսվող նոր ծրագրերին:
     Մասնավորապես քննարկվեց Հույսի ուղի (Rays of Hope) ծրագրին Հայաստանի մասնակցության հարցը և Խարսխային կենտրոն դառնալու հնարավորությունները:
     Որոշվեց անցկացնել ԱԷՄԳ մասնագետների այց, գնահատելու Հայաստանի կարողությունները և կարիքները, ինչպես նաև Հայաստանը Խարսխային կենտրոն դառնալու հնարավորությունները:
   - Հանդիպում ԱԷՄԳ իրավական հարցերով գրասենյակի, Միջուկային համաձայնագրերի և օրենքի բաժնի ղեկավարի հետ:

Անդրադարձ կատարվեց կոմիտեի կողմից ԱԷՕԲ օրենսդրության վերանայման աշխատանքներին: Ներկայացվեց Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին ՀՀ օրենքի վերանայման ընթացքը:

Քննարկվեց ԱԷՄԳ աջակցության հնարավորությունը օրենքի նախագծի դիտարկման հարցում:

- Հանդիպում ԱԷՄԳ Միջուկային տեղակայանքների անվտանգության դիվիզիոնի արտաքին ազդակներ բաժնի ղեկավարի հետ:

Անդրադարձ կատարվեց ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի սեյսմիկ անվտանգության բարձրացմանն ուղղված աշխատանքների ընթացքը: Ներկայացվեց ԱԷՄԳ փորձագետների՝ ՀԱԷԿ այցի արդյունքները: Քննարկվեց հետագա համագործակցության ծրագրերը:

Ներկայացվեց նաև կոմիտեի կողմից ԱԷՕԲ օրենսդրության վերանայման աշխատանքները, մասնավորապես նշվեց, որ վերանայվել են «Միջուկային նոր էներգաբլոկի հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդի» և «Միջուկային նոր էներգաբլոկի (էներգաբլոկների) հրապարակի անվտանգության պահանջները» փաստաթղթերը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը"

Միջուկային համաձայնագրերի և օրենքի բաժնի ղեկավարի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին ՀՀ «նոր» օրենքի «զրոյական» նախագծի անգլերեն տարբերակը ներկայացնել ԱԷՄԳ դիտարկմանը, որից հետո կազմակերպել ազգային աշխատանքային հանդիպում:

Արտաքին ազդակներ բաժնի ղեկավարի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց «Միջուկային նոր էներգաբլոկի հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդի» և «Միջուկային նոր էներգաբլոկի (էներգաբլոկների) հրապարակի անվտանգության պահանջները» վերանայված փաստաթղթերի անգլերեն տարբերակը ներկայացնել ԱԷՄԳ դիտարկմանը, որից հետո կազմակերպել ազգային աշխատանքային հանդիպում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Խորացնել ԱԷՄԳ հետ համագործակցությունը:

Կազմակերպել նախատեսված ծրագրերի և աշխատանքների ժամանակին և որակով իրականացումը:

Վահե Գրիգորյան
11.12.2024